

Մ.Խ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԶԱՀՐԱՏԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Ներկայացվել են սփյուռքահայ գրող, բանաստեղծ, բժիշկ Զահրատի (Զարեհ Յալտրզյան) բանաստեղծական աշխարհը, պոետիկայի զարգացման առանձնահատկությունները: Զահրատի քննության առարկան մարդն է՝ իր բնույթով, վարքուբարքով, բարդ ներաշխարհով և նույնքան բարդ ճակատագրով, գոյապահպանության դարավոր կովով:

Առանցքային բառեր. Զահրատ, բանաստեղծական արվեստ, սիմվոլիզմ, բառախաղ, աֆորիզմ, մարդ-անհատ:

Զահրատն իր բանաստեղծությունները կերտելիս «ջուր է խմել» հայ բանաստեղծական արվեստի դասական ակունքներից, սակայն կանգ չի առել, այլ, օգտվելով ժամանակակից գրականության նոր ձևերից ու չափումներից, աֆորիտիկայից ու սիմվոլիզմից, բառախաղից, բառին գույն ու ձև, շարժում հաղորդելու վարպետությունից, անցում է կատարել բանաստեղծումի մի այլ աշխարհ, որտեղ ամեն բառ միտք է ու պատմականացում:

Զահրատի ստեղծագործությունը գրեթե ուսումնասիրված չէ: Մեր նպատակն է ընթերցողին ծանոթացնել Զահրատյան ուլունքաշար ընտրանու գոնե մի փոքր մասին: Յույց տալ բառի՝ խոսք, միտք դառնալու այն ճանապարհը, որով անցել է Զահրատը՝ սփյուռքահայ գրականության մեջ թողնելով մնայուն քերթվածքներ:

«Շատը գիտնալ և այդ շատը գիտնալ քիչի վերածել, այդ քիչով կարենալ շատը պատմել...» [1]: Զահրատի ստեղծագործության ողջ բնութագիրը թերևս կարելի է ամփոփել իր այս տողերի մեջ: Նրա բանաստեղծություններն ընթերցելիս անհնար է չթափանցել յուրաքանչյուր բառի, տողի ներքին իմաստի մեջ: Ամեն տող փիլիսոփայական վերլուծության է ենթակա, թվում է՝ գրված է պարզ լեզվով, սակայն իմաստը բարդ է, ասելիքը՝ բազմաբնույթ: Զահրատը սահմանների մեջ պարփակվող բանաստեղծ չէ:

Կալիճը ձեռքին
Գիծեր կը քաշէ մեր շուրջ գերթ սահման-
հսկ ես քերթողի սպունգով խոշոր
Բոլոր գիծերը կը սրբեմ ի սպառ [1]:

Ու նրա մտքի հորիզոնը ծավալվում է բառերի աշխարհում, և որքան տալիս է, այնքան էլ դեռ մնում է:

Բառերը խումբ խումբ կը նետեմ

Ինչ որ կը մնայ ասդին

Նորեն բառեր են [1]:

Իր «շրջուն վաճառորդի» նման՝ նա վաճառում է, ում ինչ հարկավոր է. պարզ մակերեսներին ծավալ է ծախում, արմատ չունեցողներին՝ արմատ, իր անբովանդակ հաճախորդներին ծրար-ծրար իմաստ է ծախում, իսկ երբ խուլ են կամ կույր՝ լուցկի, այսինքն՝ լույս է տալիս:

Սովորական մտքերը, որոնք քարերի պես նետում ենք աշխարհ, գրող-հրաշագործը հավաքում է դրանք՝ որպես բառեր, ու դարձնելով ծաղկազարդ խաչքարեր՝ վերադարձնում մեզ.

Ամեն քերթուած

Առանց խաչի

Առանց քարի

Խաչքար է [1]:

Ու ինչպես կշռկեն ոսպը ոսպից, ոսպը քարից, նա էլ նույն կերպ ջոկում է բառը բառից, բառը դնում բառի կողքին, դարձնում կյանք ու սկսում է իրարից զատել կյանքի ցավն ու կանաչ երգը.

Ոսպ ոսպի քով-քար ոսպի քով-յանկարծ բառ մը բառ ոսպի քով

Յետոյ բառեր-ոսպ մը-բառ մը-բառ բառի քով յետոյ խոսք մը

Ու բառ առ բառ խոլ բարբառ մը-հինցած երգ մը-հին երազ մը

Յետոյ կեանք մը-ուրիշ կեանք մը-կեանք կեանքի քով-ոսպ մը -կեանք մը [1]:

Բանաստեղծության այս հատվածը հիշեցնում է Դոյմեի նկարը, որում պատկերված են խխունջներ, որոնք սողում են մեկը մյուսի հետևից: Այսպիսին է մարդկային առաջընթացը: Բայց խխունջները սողում են շրջանով, ու այդ շրջապտույտն անվախճան է: Ահա նույնն էլ բանաստեղծության մեջ է: Ծնվում ենք, ապրում ու մահանում, բայց կյանքը դրանով չի ավարտվում. այն շարունակում է իր հարատև ընթացքը, և մեկ հոգի ավել կամ պակաս՝ այդ ընթացքի մեջ ոչ մի թել չի խզվում: Չահրատը ցույց է տալիս կյանքի կրկնվող ընթացքը, սակայն այդ կրկնության մեջ դնում է իրենը: Նրա բաղձանքն է «պզտիկ աշխարհի» «պզտիկ մարդկանց» կյանքը հեռու պահել «չար բաներից» ու խնդրում է «չար բաներին» չխանգարել իրենց պզտիկ անդորրը.

Շիներ ենք մենք մեր աշխարհը

Լույս օրերու հիւրընկալ-

-Պզտիկ աշխարհ մը որ հազի հազ

Կրցեր է պարտկել

Մեր պզտիկ կեանքն ու մեր անդորրը ջերմիկ-

Այս բոլորը գացէք ըսեք չար բաներուն -եւ ըսեք

Որ չըլլաք թե պատահին- [1]:

Մեծ քաղաքի պզտիկ մարդկանց մեծ ցավերը բուժելու համար բանաստեղծը լույս է աղերսում երկնքից.

Մի լար լույս մի լար

Երկինքէն ինկողը չի լար

Մի լար թե աղքատի տուն ինկար

Գլխու վրայ է տեղդ

Մի լար լույս մի լար

Գետնացարկ չինկող լույսերը թող լան [1]:

Քրիստոնեական մտածողություն է սա. Քրիստոս ինքը լույս է, որ իջավ երկնքից ու լուսավորեց «գետնահարկերը»: Զահրատն այս տողերով կարծես այդ լույսի աղոթքն է անում:

Զահրատի օբյեկտը մարդն է՝ իր ցավերով ու հոգսերով: Մարդկանց օգնելու անհագուրդ ցանկությունը բանաստեղծական աշխարհում վերափոխում է նրան հույսի ու լույսի, սիրո ու ուրախության, համբերության, կարեկցանքի, ազատության ու արևի ծորակներ վաճառողի.

Երբ տուն երթան գետեղեն

Ու ծորակները բանան

Ու դիպվածով եթե ջուր գայ ու հոսի

Կուրախանան անսահման

Ահա կըսեն-արեւի ջուրն է ոսկի

Ահա յոյսի-ահա լոյսի կամ սիրոյ

Համբերութեան կարեկցութեան ազատութեան ջուրն է այս

Ու այդ ջուրով երես ու սիրտ կը լուան [1]:

Կարելի է ասել, որ ծորակներն այստեղ խորհրդանշական իմաստ ունեն: Բանաստեղծն ուզում է իր ավետաբեր, հուսատու ու բարի խոսքերը հասցնել յուրաքանչյուրի հոգուն: Ցանկանում է, որ ամեն մարդ մտնի բառերի գեղեցիկ աշխարհը ու այնտեղից դուրս գա լվացված ու մաքրագործված: Հավատում է, որ հույսի ու լույսի ծորակները մարդուն կդարձնեն ավելի բարի ու մարդասեր, ու մարդն իր սիրտն ու հոգին կդարձնի եկեղեցի նեղն ընկածի ու աղերսագիր ունեցողի համար:

Զահրատի ստեղծագործությունը հաճախ է ալեգորիկ բնույթ ստանում, բայց միտքը չի խառնվում, չի շփոթվում ինքն իր մեջ. այն պարզ չի, բայց հասկանալի է: Հենց սա է բանաստեղծի մեծության գաղտնիքը: Նրա ամեն մի տող, ամեն մի քառյակ մի ուրույն աշխարհի կերտում է: Նա շարունակ փնտրումների մեջ է. այդ իսկ պատճառով նրա խոսքը անհատնում է, միտքը՝ բազմաբովանդակ.

Մարդը փնտռող կենդանի մըն է-
Փնտռող-գտնող-նորեն փնտռող
Կյանքը կը հատնի-փնտրտուքներով
Մարդը չգտնող կենդանի մըն է [1]:

Նոր ժամանակների գրող լինելով հանդերձ՝ Ջահրատի ստեղծագործությունը շարունակությունն է իր նախնիների գրական ժառանգության, թեև ամենևին չի կրկնում նրանց: Հնից զատվելու, բայց և նորին չձուլվելու, չուծանալու ծանր բեռը զահրատյան փիլիսոփայական մտքին ներաճած տոհմաճառ է հիշեցնում, որը վերընձյուղվում է արմատից ու ճղեճյուղ տարածվելով՝ ստեղծում բանաստեղծականության մի նոր ու ուրույն աշխարհ: Պատմությունը յուրաքանչյուրիս նախասկիզբն է, ու Ջահրատն ինքն իրեն դուրս չի դնում պատմությունից, համարում է իրեն նրա վերսկսողը, շարունակողը, պատմողը.

Ես պատմաբան եմ

Կերթամ բռներ եմ պատմության ճամբան...[1]:

Ու որպես պատմության շարունակող՝ գրողը ցանկանում է, որ «աղվոր բաներ» կատարվեն մեր կյանքում: Նվազելով մեր մանկության հին երգերը՝ գրողը երագում է, որ երկրի ցամաքած արգանդից կրկին ծնվեն այն առուները, որոնք դարեր շարունակ կրթել ու սնել են մեր ժողովրդին: Ու երբ երկիրը կունենա հույսի ու լույսի ծորակները, այդժամ կմիատեղվի ու իր առջև կբացի լույս հորիզոններ ու պայծառ գալիքներ.

Աղուոր բաներ երբ պատահին

մենք միատեղ

կը նայինք լույս հորիզոնին

ու պատրաստ ենք

վերապրելու մեր կեանքը հին

Աղուոր բաներ երբ պատահին

Աղուոր բաներ կը պատահին [1]:

Ջահրատի ստեղծագործությունը շաղախված է անհաս երազանքներով, սիրելի վերհուշերով ու մանկության պատրանքներով: Նա շարունակաբար փնտրում է դեպի հետ, դեպի մարդկության ակունքներն ու արմատները տանող ճանապարհները: Դրա լավագույն օրինակը «Պատմության հանրակառքով ճամփորդութեան մը» բանաստեղծությունն է.

Տասը դրուշ է կ'ըսէ-կը նստի

Կ'երագէ-կ'ուգէ որ հեռուներն երթուց

-Ուր-ով-գիտէ-

Թերեւս ետ մանկութեան տարիներուն

Թերեւս առաջ յուսացած գերուն

Բայց հանրակառք է այս -գիծէն դուրս չելլէր

Բայց հանրակառք է այս -գիծերն դուրս չելլէր [1]:

Կյանքը, իրոք, հանրակառք է. այն միշտ առաջ է սլանում ու ետ տալ ժամանակը անհնար է, այն երբեք դուրս չի ելնում իր ուղեծրից, իսկ Զահրատ բանաստեղծի մեծագոյն բաղձանքն այն է, որ երբեմն էլ իր գծից դուրս գա, խոտորվի: Եվ հետդարձի ճամփան չգտնելով՝ նորօրյա աղոթքի պես ձգվում է գրող-երագրողի «դարուն երգը».

Ինչ գեղեցիկ է ծնիլ ամենուն հետ

Փոքր ինչ շշուկ բերել միատեղ

Երգել ամենուն հետ

Մեռնիլ ամենուն հետ

Մոռցվիլ ամենուն հետ [1]:

Սակայն պետք չէ կարծել, թե գրողի ցանկությունն է իր շուրջը տեսնել միատարր, գորշ զանգված, պարզապես նրա մեծագոյն իղձը մեծարենցյան մտքի շարունակությունն է. անանձնական ուրախության ակնկալիքն է, այնպիսի ուրախության, որն անգամ մեր մահից հետո կժպտա սերունդներին մեր ոտնահետքերից.

Վաղն այս ճամփեն անցնողները մեր ոտքին հետքերը

Պիտի տեսնեն գետնին վրա

Մենք անոնց պիտի ժպտինք մեր ոտքերուն հետքերով [1]:

Գրողի խոհափիլիսոփայական միտքը շարունակ թեւածում է անհուններում ու անընդհատ փնտրում մարդու մարդացման ճանապարհներ. «Ամանոր» բանաստեղծությունը հենց այդ ոգեկոչն ունի.

Մենք այս գիշեր նորէն դիտակ մը առած

Դեպի երկինք կը նայինք-

Աստղերն այնքան կը խոշորնան որ մեկէն

Մենք զմեզ հոն-կամ անոնք հոս կը կարծենք

Քաղաքակիրթ մարդու պիտակ մը առած

Չենք զիջանիր մտերմանալ -ամէն աստղ

Դեռ բարբարոս կը կարծենք [1]:

Ապրում ենք քաղաքակիրթ աշխարհում, բայց դեռ արյունոտ կոիվներ ենք տալիս կրոնի ու դավանանքի համար, իսկ նրանց, ովքեր մեզ գաղափարակից չեն, համարում ենք հեթանոս, անաստված՝ մոռանալով, որ երկու մոմ վառողը դեռ փարոս չի կառուցում:

Թեև Թումանյանին ու Ջահրատին կես դարից ավելի է բաժանում, բայց խզում չկա մեր ժողովրդին հատուկ իմաստուն մտածողության միջև: Ու թեև նրանցից մեկը արևելահայ գրող է, իսկ մյուսը՝ սփյուռքահայ, սակայն նրանք երկուսն էլ ըմպել են նույն մաքրամաքուր ակունքի ջուրը: Ջահրատը, կարծես, մեկ անգամ ևս գալիս է հաստատելու Թումանյանի «...Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան» միտքը: Նրա երազանքն է, որ մարդը մարդանա ու դառնա մեծ տիեզերքի մի մասնիկը, նրա շարժիչ ուժը.

Դեռ չենք սորվեր կարգն ու սարքը տիեզերքին-

Ամեն ինչ

Տարտամ-քառս կը կարծենք [1]:

Այստեղ զգալի է նաև նարեկացիական մտածողությունը. մարդը պետք է ձգտի կատարյալին, իսկ կատարյալ է Աստված, ու մենք, մաքրագործվելով մեր մեղքերից, պիտի հասնենք ճշմարիտ հավատքին առ Աստված:

Ջահրատն ինքը իրեն շատ հեռու է համարում կատարյալից: Կյանքը համարում է «հանդես»: Ամեն կյանք մտնող ստանում է մի դույլ ու մի պարան ու բազմության հետ կանգնում կյանքի մեծ ավազանի կողքին, որ այնտեղից դույլով քաշի հանի այն, ինչ իր հասանելիքն է: Ոմանց տրվում են ոսկյա դույլեր, ոմանց ժանգոտած, ոմանց՝ ծակ: Ոմանց հաջողվում է կյանքի ավազանից հանել ամենագեղեցիկն ու լավը, իսկ ոմանց էլ միայն փրփուրներն են բաժին ընկնում, բայց յուրաքանչյուրն իր բաժինն է քաշում, իսկ ինքն ավազանից, այսինքն կյանքից հեռու կանգնած մտածում է, թե ինչպես պարանը զողի դույլին, որ ինքն էլ միանա կյանքի մեծ հանդեսին, խառնվի բազմությանը, չմնա որպես հանդիսատես.

Իսկ ես անօգ անտիրական-գրկանքներով ճիտս ծուռ

Մէկ ձեռքս դույլ- միայն պարան- այդպես ապշած կը կենամ

Ո՛հ չեմ գիտնար պարանն ինչպես զօղել դույլին որ ես ալ

Այս հանդեսեն դուրս գամ-հոգիս ապրումներով ճոխացած

Շատ եզական հանդես մըն է ասիկա

Իսկ ես այսպես հանդիսատես կը մնամ [1]:

Ջահրատ բանաստեղծը և Ջահրատ մարդը միանգամայն բացահայտվում է հենց իր իսկ ստեղծագործությունների մեջ: Ուրույն է այն աշխարհը, որ բերում է նա՝ բոլորովին նոր, առողջ, թարմ, ռիթմիկ, թեև գրողն ընդհանրապես չի պահպանում հանգավորում կամ կետադրություն: Նա կարողանում է բանաստեղծական մի տողի, մի տան միջոցով կոնկրետ սոցիալական հարցադրումներից ու կոնկրետ սոցիալական միջավայրից հանգել ընդհանրականին:

Ջահրատի ստեղծագործական ոճը, լեզվի կառուցվածքը և՛ շատ նոր է, և՛ անսահման հարազատ հայկական բանաստեղծական արվեստի ժառանգորդությանը: Ջահրատյան տողը մերթ միջնադարյան տաղի, մերթ խաղիկի հանգ ունի.

Կաքավ կաքավ կաքավիկ
Լայնշի լուսնյակ լար մահիկ
Պարող պարիկ պարող պար
Զեփյուռ բարբառ լույս բարբառ [1]:

Մերթ էլ՝ նարեկացիական ալիտերացիա, երաժշտականություն, հնչյունին գույն ու երանգ հաղորդելու արվեստ, բառը հանգ դարձնելու վարպետություն.

Յող ցող այցուն խոնավիկ
Շող շող արփին խամաճիկ
Բարունաչե բարունաչե,
Երագ տալ տալ մանկունակ [1]:

Կամ՝ տոգորված միջնադարյան սիրերգին բնորոշ Քուչակյան հայրենների շնչով.

Սև հագնիմ
Ամպ հագնիմ անձրև հագնիմ
Ցավը սրտիկս է այրեր
Աշնան չոր տերև հագնիմ հուր ժողվիմ
Իմ սիրածեն լուր ժողվիմ
Հուրը գողնան ու երթան
Ես նստեմ փրփուր ժողվեմ [1]:

Զահրատի գրիչը կարող է նույն ուժով ու սահունությամբ շարժվել նաև անհանգ բանաստեղծության մեջ: Հանգով թե անհանգ, մի քանի տող թե բազմատող՝ Զահրատի նպատակը մեկն է՝ «դառնալ շաղախ, որ կզոդե աշխարհացրիվ ձեր անուններն իրարու» [1], դառնալ մեծ հրապարակ գույնզգույն բազմության համար: Իսկ գրվում են նրա բանաստեղծությունները մեսրոպաբույր.

Կյանք կը բուրեն
Վերագարթնում ու հաղթանակ կը բուրեն
Ուր որ ըլլան հողմացրիվ ուր որ գաղթեն-վարդապետ
Քու տառերդ ազատություն կը բուրեն [1]:

Զահրատը գրում է բոլորի համար՝ անկախ ազգությունից ու պատկանելությունից: Մարդկանց տանում է դեպի համամարդկային արժեքներն ու գաղափարները: Գնահատելով Զահրատի ստեղծագործությունը՝ Ալ. Թոփչյանը գրում է. «Արդիական լինելու թովչանքը մոլորեցնող է և վտանգավոր, դրա համար պետք է լինել մեծ տաղանդ, որպեսզի կարողանաս խոսել բոլոր ժամանակների ընթերցողների հետ: Լև Տոլստոյը Ցանդիի առիթով ասում է. «Որքան լայն ու խորն է միտքը, նույնքան անսահման են այն հայրենիքի սահմանները, որին պատկանում է այդ միտքը»: Զահրատի պոեզիան ձգտում է այդպիսի անսահմանության» [2]:

Ջահրատի պոեզիան ուսումնասիրելու, կարդալու համար հարկավոր է ունենալ աշխարհին ընկալելու, իրերն ու երևույթները տեսնելու, դրանք գնահատելու, սեփական պրիզմայով անցկացնելու և դրանք համամարդկային գաղափարներին համադրելու ունակություն:

«...Աստված, սեր, իմաստասիրություն...: Չխանգարեմ ձեր փնտրտուքը, չգրկեմ ձեզ Ջահրատին այնքան բնորոշ գյուտի հաճույքից:

Ջահրատի պոեզիան նախաբանի, մեկնությունների կամ վերջաբանի կարիքը չունի: Նրբամիտ ու խորամիտք Ջահրատը՝ յուրաքանչյուր պահ՝ հետամուտ գյուտի ու հաջողակ դրանում:

Աֆորիզմի մի տող պոեզիա է Ջահրատինը: Պոեզիայի մի տող՝ աֆորիստիկ միտք ու խոսք:

Էդպիսին են Բասյուն, Թաքուրոքուն, Լեցը... Ջահրատը» [1],- այսպես է բնորոշում նրան Այդին Մորիկյանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ջահրատ**, Բառ բառի քով: Ընտրանի, Եր., «Նաիրի» հրատ., 2007:
2. **Ջահրատ**, Մեծ քաղաքը: Եր., «Սովետական գրող» հրատ., 1978:

М.Х. МАНУКЯН

ПОЭТИЧЕСКИЙ МИР ЗАХРАТА

Представлены поэтический мир писателя, поэта и врача из армянской диаспоры Захрата (Заре Ялтджяна), особенности развития поэзии. Объектом исследования Захрата является человек со своей сущностью, поведением, сложным внутренним миром и такой же сложной судьбой, вековой борьбой за существование.

Ключевые слова: Захрат, поэтическое искусство, символизм, каламбур, афоризм, личность.

M.KH. MANUKYAN

THE POETIC WORLD OF ZAH RAT

The poetic world and the peculiarities of poetry of the Diaspora Armenian poet Zahrat (Zareh Yaltschyan) are presented. The object of Zahrat's consideration is the man by his nature, behaviour, complex inner world as well as his hard fate and age-long struggle for survival.

Keywords: Zahrat, poetic art, symbolism, pun, aphorism, individual.